ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«14» ապրիլի 2021թ. №

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1) օրենքի նախագիծը (հիմնական զեկուցող՝ Սոֆիա Հովսեփյան),
2) օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը,
3) գործող օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ տեղեկանքը:

Խնդրում ենք օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

ԱԺ պատգամավորներ՝ Սոֆիա Հովսեփյան

Թագուհի Թովմասյան

Գոռ Գևորգյան

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

# «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. «անդամները» բառից հետո ավելացնել «պարտադիր կերպով պետք է մոտենան Ազգային ժողովի ամբիոնին և բանավոր» բառերը,
2. «պատասխանում են» բառը փոխարինել «պատասխանեն» բառով:
3. «հարցերին» բառից հետո ավելացնել «կամ բանավոր ներկայացնեն հիմնավորում՝ պատգամավորների բանավոր հարցերին բանավոր չպատասխանելու պատճառների մասին» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

### 1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ «Կանոնակարգի 36-րդ հոդվածի 1-ին մասում նշված ժամկետներում գումարվող յուրաքանչյուր հերթական նիստերի չորեքշաբթի օրվա վերջին հիմնական նիստում Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին»: Սակայն գործնականում Կառավարության անդամները, գտնվելով ԱԺ նիստերի դահլիճում, երբեմն բանավոր չեն պատասխանում պատգամավորների բանավոր հարցերին՝ փոխարենը նիստը վարողի միջոցով առաջարկելով հարցը ներկայացնել գրավոր: Ընդ որում, Կառավարության անդամները շատ հաճախ նույնիսկ չեն ներկայացնում հիմնավորում՝ պատգամավորների ներկայացրած բանավոր հարցերին բանավոր չպատասխանելու պատճառների վերաբերյալ: Արդյունքում խորհրդարանական վերահսկողության իրականացման արդյունավետության տեսանկյունից խնդիր է առաջանում, քանզի «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված՝ Կառավարության անդամներին բանավոր հարցերով դիմելու և բանավոր պատասխան ստանալու միջոցով են նաև պատգամավորները իրականացնում խորհրդարանական վերահսկողություն Կառավարության նկատմամբ: Ավելին, հասարակության շրջանում հետաքրքրություն ունեցող թեմաների վերաբերյալ պատգամավորների հնչեցրած հարցերին ակնկալվում է ստանալ բանավոր պատասխան կամ բանավոր ներկայացված հիմնավորում՝ հարցերին բանավոր չպատասխանելու պատճառների մասին, քանզի Կառավարության անդամներին գրավոր հարցեր ուղղելու հնարավորություն ԱԺ կանոնակարգն արդեն իսկ սահմանում է:

### 2. Առաջարկվող լուծումները.

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 1-ին մասի «անդամները» բառից հետո ավելացնել « պարտադիր կերպով պետք է մոտենան Ազգային ժողովի ամբիոնին և բանավոր» բառերը, «պատասխանում են» բառը փոխարինել «պատասխանեն» բառով, «հարցերին» բառից հետո ավելացնել «կամ բանավոր ներկայացնեն հիմնավորում՝ պատգամավորների բանավոր հարցերին բանավոր չպատասխանելու պատճառների մասին» բառերը:

3. **Նախագծի ընդունման նպատակը և ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունմամբ նպատակ ունենք սահմանել պարտադիր պահանջ Կառավարության անդամների համար՝ ԱԺ – Կառավարություն հարցուպատասխանի ժամանակ պարտադիր մոտենալ ԱԺ ամբիոնին և բանավոր պատասխանել պատգամավորների հարցերին կամ բանավոր ներկայացնել հիմնավորում՝ պատգամավորների հարցերին բանավոր չպատասխանելու պատճառների մասին: Արդյունքում ակնկալվում է մեծացնել խորհրդարանական վերահսկողության իրականացման արդյունավետությունը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ**

**ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հոդված 120 Կառավարության անդամներին բանավոր հարցերով դիմելը**

1. Կանոնակարգի 36-րդ հոդվածի 1-ին մասում նշված ժամկետներում գումարվող յուրաքանչյուր հերթական նիստերի չորեքշաբթի օրվա վերջին հիմնական նիստում Կառավարության անդամները պարտադիր կերպով պետք է մոտենան Ազգային ժողովի ամբիոնին և բանավոր պատասխանեն ~~պատասխանում են~~ պատգամավորների բանավոր հարցերին կամ բանավոր ներկայացնեն հիմնավորում՝ պատգամավորների բանավոր հարցերին բանավոր չպատասխանելու պատճառների մասին: